ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԵՎ ԸՆԴԼԱՅՆՎԱԾ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ (ՀԸԳՀ) ՄՏԵԼ Է ՈՒԺԻ ՄԵՋ

ԱՄՐԱԳՐՎՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿ՝ Ի ՇԱՀ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ

ԱՎԵԼԻ ԼԱՎ ԿԵՆՍԱՊԱՅՄԱՆՆԵՐ

- ԱՎԵԼԻ ՇԱՏ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ
- ԱՎԵԼԻ ՄԵԾ ԲԻԶՆԵՍ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՎԵԼԻ ԱՐԴԱՐ և ԱՊԱՀՈՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

- ԱՄՐԱՊՆԴՎԱԾ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ
- ԱՎԵԼԻ ԱՊԱՀՈՎ և ԱՆՎՏԱՆԳ ՄԻՋԱՎԱՅՐ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ
- ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆ

ԱՎԵԼԻ ՄԱՔՈՒՐ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐ

- Ավելի պաշտպանված շրջակա միջավայր
- Ավելի մաքուր և ավելի մատչելի էներգիա

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՎԵԼԻ ՄԵԾ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

- Ավելի լավ կրթություն

ԱՎԵԼԻՒ ԼԱՎ ԿԵՆՍԱՊԱՅՄԱՆՆԵՐ

ԱՎԵԼԻՒ ՇԱՏ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ

Ավելի լավ ներդրումային միջավայր. Համաձայնագիրը խթանում է նորմատիվ-իրավական դաշտի կատարելագործումը, որի շնորհիվ կբարելավվի գործարար միջավայրն ու ներդրումային հնարավորությունները Հայաստանի եւ Եվրոպական միության ընկերությունների համար՝ խրախուսելով հայկական ընկերություններին մեծացնել դեպի Եվրոպական միություն ապրանքների եւ ծառայությունների վաճառքի ծավալները, ինչպես նաև խրախուսելով ԵՄ ընկերություններին հիմնադրել դուստր ընկերություններ Հայաստանում, որն էլ իր հերթին կնպաստի տնտեսական աճի խթանմանը եւ աշխատատեղերի ստեղծմանը:

Ավելի շատ աշխատատեղեր կանաչ էներգիայի ոլորտում. Համաձայնագրի իրականացումը խթանում է էներգիայի մաքուր, այլընտրանքային աղբյուրների ստեղծումը՝ նպաստելով «կանաչ աճին» եւ կանաչ (վերականգնվող) էներգիայի ոլորտում նոր աշխատատեղերի ստեղծմանը:

Մտավոր սեփականության իրավունքի պաշտպանության ուժեղ համակարգ. Նորարար ստեղծագործություններ, գեղարվեստական գործեր, յուրահատուկ եւ բարձրորակ արտադրանք ստեղծող եւ վաճառող ավելի շատ հայ արվեստագետներ ու գյուտարարներ, ինչպես նաեւ հայկական ընկերություններ կարող են ապավինել Հայաստանում մտավոր սեփականության իրավունքի պաշտպանության համակարգին, ճիշտ ինչպես Եվրոպական միության տարածքում:

ԱՎԵԼԻՒ ՄԵԾ ԲԻԶՆԵՍ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բիզնեսի համար ավելի կայուն եւ կանխատեսելի պայմաններ. Եվրոպական միության եւ Հայաստանի միջեւ հարաբերությունները ղեկավարվում են ԵՄ-ն եւ միջազգային չափանիշներին համահունչ՝ ապահովելով բիզնես միջավայրի առավել կանխատեսելիությունն ու կայունությունը: Նոր համաձայնագրի դրույթների համաձայն՝ փոքր եւ միջին ձեռնարկություններին (ՓՄՁ) պետք է տրամադրվի ՀԸԳՀ իրականացման մասին տեղեկատվություն և խորհրդատվություն, որը կնպաստի մասնավոր հատվածին վերաբերող օրենսդրության թափանցիկության բարձրացմանը:

Ծառայությունների առեւտրի ընդլայնման նոր հնարավորություններ. Համաձայնագիրը նախատեսում է երկկողմ առեւտրի ազատականացում ծառայությունների մատուցման մի շարք ոլորտներում, օրինակ՝ վարձակալության և լիզինգի ծառայությունների, խորհրդատվական, ինժեներական, լուսանկարչական, փաթեթավորման, փոստային, ֆինանսական եւ տրանսպորտային ծառայությունների մատուցման համար: Սա նշանակում է, որ հայկական ընկերություններն իրավունք կունենան ծառայություններ մատուցել ԵՄ-ում եւ հակառակը:

Գնումների շուկաների հասանելիություն. Հայ գործարարները կարող են մասնակցել ԵՄ-ում իրականացվող պետական գնումներին եւ հակառակը: Կտրամադրվի շուկայի լրացուցիչ փոխադարձ հասանելիություն աշխատանքների իրականացման կոնցեսիաների առումով, օրինակ՝ ջրամատակարարման եւ հանրային ծառայությունների մատուցման եւ այլ ոլորտներում:

ԱՎԵԼԻ ԱՐԴԱՐ և ԱՊԱՀՈՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՄՐԱՊՆԴՎԱԾ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Եվ Հայաստանը եւ ԵՄ-ը վերահաստատում են իրենց հանձնառությունը և ներդրումներ են կատարում բարեփոխումների ուղղությամբ `ամրապնդելով ժողովրդավարության հիմնաքարերը, այդ թվում՝ արժանահավատ եւ թափանցիկ ընտրությունների իրականացումը, արդար դատավարության իրավունքը եւ, ընդհանուր առմամբ, հարգանքը մարդու իրավունքների նկատմամբ:

Համաձայնագրով ստեղծվում է Քաղաքացիական հասարակության անկախ պլատֆորմ՝ կազմված հայաստանյան եւ ԵՄ կազմակերպություններից, որոնք վերահսկում են Համաձայնագրի իրականացումն ու կարող են առաջարկություններ ներկայացնել ՀՀ իշխանություններին եւ Եվրոպական միությանը:

Համաձայնագրով կարեւորվում է իրավունքի գերակայության, այդ թվում՝ դատական համակարգի անկախության ամրապնդումը, արդարադատության մատչելիությունը, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով նախատեսված արդար դատաքննության իրավունքը եւ քրեական գործերով ու տուժողների իրավունքների դատավարական երաշխիքները ապահովումը:

ԱՎԵԼԻ ԱՊԱՀՈՎ և ԱՆՎՏԱՆԳ ՄԻՋԱՎԱՅՐ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Միջուկային անվտանգության բարելավում. Սույն համաձայնագրով ԵՄ-ը հաստատում է համագործության հստակ միջոցառումների միջոցով Հայաստանում միջուկային անվտանգությունը հնարավոր ամենաբարձր մակարդակի հասցնելու հանձնառությունը:

Ավելի խորը համագործակցություն հանցավորության դեմ պայքարում. Համաձայնագիրը հնարավորություն է ընձեռում ընդլայնել ԵՄ-ի եւ Հայաստանի միջեւ համագործակցությունը ` հանցավոր գործունեության կանխարգելման եւ դրանց, այդ թվում կազմակերպված հանցավորության եւ ահաբեկչության դեմ պայքարի ուղղություններով:

Սպառողական արտադրանքի անվտանգության ու սպառողների պաշտպանության բարձրացում. Հայաստանը կփորձի նվազեցնել ԵՄ չափանիշների հետ կապված առկա տարբերություններն՝ ի նպաստ սպառողների իրավունքների հետագա պաշտպանությանը: ԵՄ-ն եւ Հայաստանը կամրապնդեն համագործակցությունը՝ ընդլայնելու փոխադարձ պատկերացումներն իրենց համապատասխան համակարգերի մասին եւ դյուրացնելու մուտքը իրենց համապատասխան շուկաներ:

ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆ

Հարկատուների գումարների ավելի արդյունավետ օգտագործում. Նոր համաձայնագրով ամրագրվում են մրցույթների հրապարակման եւ գնահատման ընթացակարգերի հստակ կարգավորումներ, որոնք թույլ կտան կանխարգելել կոռուպցիան և իրականացնել պետական գնումների ոչ խտրական ընթացակարգեր: Մշակվում են պետական սուբսիդավորման նոր կարգավորումներ՝ գործընթացների արդարությունն ու թափանցիկությունը ապահովելու նպատակով:

Ավելի լայն ընտրություն եւ ավելի ցածր գներ սպառողների համար. Համաձայնագիրը ներառում է առեւտրի համար անհարկի խոչընդոտները նվազեցնելուն ուղղված միջոցառումներ. Օրինակ, կազմակերպվում են սպառողական ապրանքներին առնչվող կարգավորումների վերաբերյալ հանրային խորհրդակցություններ, որոնք միաժամանակ բաց են մյուս կողմը ներկայացնող ընկերությունների համար, ինչպես նաև հանվում են պիտակավորման բարդ պահանջները: Արդյունքում ավելի շատ ընկերություններ կկարողանան իրենց արտադրանքը ներկայացնել հայկական եւ ԵՄ շուկաներում՝ ապահովելով մրցունակ գներ:

ԱՎԵԼԻ ՄԱՔՈՒՐ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐ

Ավելի պաշտպանված շրջակա միջավայր

Բնապահպանական չափանիշների բարելավում. Համաձայնագիրը կօգնի Հայաստանին գրանցել տնտեսական աճ եւ՝ ԵՄ չափանիշների ընդունման շնորհիվ բարելավել շրջակա միջավայրը: Հայաստանն՝ իր օրենսդրության եւ գործելակերպի շրջանակներում կիրականացնի միջազգային չափանիշներին եւ համաձայնագրերի պահանջներին համապատասխանող շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված միջոցառումներ: Հայաստանը կձգտի կլիմայի փոփոխությունների մեղմացման համար կարեւոր նշանակություն ունեցող այնպիսի ապրանքների եւ ծառայությունների առեւտրի ու դրանցում կատարվող ներդրումների համար խոչընդոտների վերացմանը, ինչպիսիք են՝ կայուն վերականգնվող էներգիան եւ էներգաարդյունավետ արտադրանքը:

ԵՄ-ն եւ Հայաստանը համագործակցում են՝ ընդլայնելու բնական պաշարների կայուն օգտագործումը եւ կենսաբանական բազմազանության պահպանումը:

Ավելի մաքուր և ավելի մատչելի էներգիա

Համաձայնագրի իրականացումը խթանում է էներգիայի մաքուր աղբյուրների զարգացումը: Այն նաև կբարձրացնի մատակարարման անվտանգության մակարդակը եւ կնվազեցնի կախվածությունը էներգետիկ ներկրումներից:

Ավելի մատչելի էներգիա. Համաձայնագիրը ներառում է դրույթներ, որոնք թույլ են տալիս բարձրացնել էլեկտրաէներգիայի ոլորտում մրցակցությունը, որն էլ հանդիսանում է Հայաստանի քաղաքացիներին էլեկտրաէներգիա մատակարարելու ապահով և մատչելի եղանակներից առավել տնտեսողը: Շուկայի ազատականացումն ունի էլեկտրաէներգիայի ցածր գինը հսկողության տակ պահելու և հայ սպառողների համար էլեկտրաէներգիայի դիմաց ցածր գներ ապահովելու ներուժ:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՎԵԼԻ ՄԵԾ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Ավելի լավ կրթություն

ԵՄ-ն կխթանի վերապատրաստումը և խորհրդատվությունը՝ Հայաստանում կրթության որակը բարելավելու համար: Մասնավորապես, ԵՄ-ն կօգնի Հայաստանին խթանել ցկյանս ուսուցումը՝ խրախուսելով համագործակցությունն ու թափանցիկությունը կրթության և վերապատրաստման բոլոր մակարդակներում, հատուկ ուշադրություն դարձնելով մասնագիտական կրթությանն ու ուսուցմանը և բարձրագույն կրթությանը: Հատուկ ուշադրություն է հատկացվելու աշխատանքահեն ուսուցմանը, Բոլոնիայի գործընթացին, Տորինոյի գործընթացին, ուսանողների և ուսուցիչների շարժունությանը, մասնագիտական որակավորումների ազգային շրջանակի մշակմանը և այլն:

eeas.europa.eu/armenia
#eu4armenia

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

ՓԵՏՐՎԱՐ 2021